Աշակերտարանը

Աշակերտարանի եկեղեցին նորոգուեցաւ Խաչակրաց կողմէն, 1102–1106, և փոքր աղօթարանի ձև տրուեցաւ և կոչուեցաւ Հայր մերի եկեղեցի։ 1152 ին, Տանիմարքացի երկու եղբայրներ, մին ծովապետ և միւսն եպիսկոպոս, այցելեցին այս եկեղեցւոյն, որ փոքր և խղճալի չէնք մ'էր։ Երկու եղբայրներն իրենց ծախքով վերանորոգեցին զայն և ըստ կտակի թաղուեցան հոն։ Այս դարուն Աշակերտարանի նախկին աւանդութեան վրայ աւելցան նաև Առաքելոց Հանգանակին և Հայր մերի նոր աւանդութիւնները։

Բլուրը

Խաչակիրք Բլրի Եկեղեցին 1099 ին վերանորոգեցին և յատկացուցին պաշտամունքի ժողովներու և վերածեցին իր նախնի պայծառութեան, ինչպէս միւս սրբավայրերն։ Անոր յիշատակը երկար ատեն առաւելակշիռ մնաց Զիթենեաց լերան վրայ։ ԺԲ. դարու ուխտաւոր ուղեգիրները հետևալ կերպով կը նկարագրեն նոյն եկեղեցին. քսան աստիճաններով սանդուղ մը կը դանուէր անոր առջևը, որուն ծայրի սրահը կը ծառայէր իբր գաւիթ, եկեղեցին, առաջուան պէս, արտաքին բոլորչի պատով մը պահպանուած էր. ներսի կողմը կար մարմարիոնէ սալարկուած սրահ մը սիւներէ բռնուած կամարով մը։ Գեղեցիկ նկարներով և քանդակներով զարդարուած էին որմերը։ Աւանդական յատակագծին համաձայն, չէնքին կեդրոնը ո՛չ տաճիք կար և ո՛չ ալ գմբէթ։

Իսկ գալով այն փոքր չէնքին, որ կը դանուէր բացօթեայ մասին ճիշդ մէջտեղը, ոչ թէ Բիւզանդացւոց ժամանակի պղնձէ շինուած այն պարզ շրջափակն էր, որ կը պարունակէր ուխտաւորաց բաշխուելիք նուիրական փոշին, այլ կապուտագոյն երակով ճերմակ մարմարէ ծածկուած կլոր փոքր աշտարակ մը, որուն վրայ կար փոքրիկ գմբէթ մը, գագաթը բաց։ Եկեղեցւոյն մէջ կար նաև ժայռի մը ցցուածքը, որմէ ուխտաւորք մասեր կ'առնէին և կը համբուրէին, մտածելով որ անոնք կը կրեն Փրկչին ոտքերուն հետքը։ Ինչպէս երբեմն փոշին բովանդակող փոքր աշտարակը, նոյնպէս այս ժայռին ցցուածքը կը դանուէր գմբէթին ճիշդ բացուածքին տակ. և անոր վրայ կար սեղան մը